

Մեզ մնում է այժմ առաջին բոլոր շարականների ցանկը, որոնք գրի են առնուած 1588-ի մէջ, է որ կրճատ և է որ արձակ և դուրս են մնացել արդի Շարականացից, այլ ևս գործածական չեն, պարականոն են: Կրճատ-հին շարականներից առաջ գնում ենք աստղանիշ: հետևեալ ցուցակում առաջին սիւնակը յատկացնում ենք այդ շարականների թուահամարին, երկրորդը՝ մեր վերնում ևս գործածած դասաւորութեան 1—162 կարգին, իսկ աջակողմեան սիւնակում նշանակում ենք ձեռագրի էջերը:

կր ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ.

ՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԱԿԵՍ ՏԵՐ-ՄԻԲԱՅԷԼԵԱՆԸ

ՀԱՆՆԻՒՄ ԳԻՍԱԽՈՐԻ ՀԵՏ

ԶՈՒԳԱԳԻՊԱՄ ՀԱՄԱՇԵՍԱՐ ՀԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԸ.

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԻՆ)

1222 թ. Ք. յ. Այս թուականին, երբ Հայէի գիտաւորը երևաց, Անդղիայում թագաւոր էր Հենրիկ III-ը, բարձունքը ձեռք բերեցին մեծ իշխանութիւն, որի դէմ թագաւորը անդոր էր: Այդ նոյն ժամանակ Եգիպտոսի կառավարիչն էր Ադիլ-լալի որդի Էլ—Կամիլ, որը բարեւոյցեց ջրաբաշխութիւնը, վերջացրեց Գահիրէի բերդի շինութիւնը, բացեց կրթական հաստատութիւններ և ընդհանրապէս հովանաւորում էր լուսաւորութեանը: Ս. Ֆրանցիսկ Աստիզիացին քարոզներ էր խօսում և ընդհանրապէս էլ—Կամիլը բարեացակամ էր դէպի քրիստոնէութիւնը, մինչև որ Լուդովիկոս Առերբ իւր խաչակրաց արշաւանքով չորբոքեց նորա մէջ հին թշնամութիւնը: Գիտաւորի դարձման այս շրջանը, այսինքն 1222 մինչև 1301 թ. ամենաերկարն էր բոլոր մինչ այդ յայտնի շրջաններից, այսինքն նա տեսց 79 տարի 2 ամիս, այն ինչ, այն շրջանը, որ նա այժմ վերջացնում է ամենակարճն է, որ բովանդակում է 74 տարի 5 1/2 ամիս:

1301 թ. Ք. յ. Հէնց այս տարին փառասէր Բոնիֆացիոս VIII պապը, ի նշան հոգևոր իշխանութեան առաւելութեան աշխարհականից, փեղոյրը փոխեց տիարայի (պապական թագ): Նա բոտ ամենայնի հակառակում էր Ֆրանսիայի կայսրութեան, ներկայացնելով «պապական այն պահանջները, որոնց բաւականութիւն տալը պապական իշխանութիւնը գերազանցում է կայսրականից»: Բռնակալները սկսեցին Իտալիայի ա-

դատ քաղաքները տիրապետել: Սատոմանները հիմնեցին իրենց կայսրութիւնը, վերցրին Ազրիանոպօլը, յունաց կայսերը իրենց վասսալ դարձրին և Կ. Պօլիսը չվերցրին շնորհիւ Թեմուրի մօտենալուն: Կանտակուզէնի և Պալէօլօփի մէջ ներքին հռիւ հար: Անգղիայի ամենանշանաւոր թագաւորներից մէկը Էդուարդ I-ը, պատրաստուում էր Ուիլիամ Ուոլլէսի առաջնորդութեամբ Շոտլանդիան կողոպտել և նրան յաջողուեց այդ ժամանակ Ուէլսին անգղիայի թագին հպատակեցնել:

1378 թ. Բ. Յ.: Անգղիայի թագաւորն էր Բիչարդ II. Ջոն Ուիլիլֆը իւր կեանքի վերջին օրերն էր անցնում Աստուածաշունչը անգղիերէն թարգմանելուց յետոյ, որով և նպաստեց սկսող յեղափոխութեանը: Այս թուականին պապական եկեղեցւոյ մէջ հերետիկոսներ են երևում: Գիտաւորը տեսանելի էր Զինաստանում և եւրոպայում:

1456 թ. Բ. Յ.: Այս թուականին երբ Հալլէի աստղը իւր ամբողջ փայլի մէջ էր, Անգղիայում տեղի ունէին ներքին հռիւներ (յայտնի հռիւները երկու վարդերի), — Հենրիխ VI-ը, որ 1455 թ. գերի ընկաւ, յետոյ առժամանակ ազատուեց: Եւրոպայում դործերը գտնուում էին կրիտիքական դրութեան մէջ և քրիստոնէութեան վիճակը կախուած էր մազից: Կ. Պօլիսը առնուած էր 1453 թւին Մահմէտի առաջնորդութեամբ տաճիկների ձեռքով, որից յետոյ թւում էր, թէ ամեն բան պիտի գլուխ խոնարհի կիսալուսնի առաջ: Կալիկս III. պապը 1455 թ. Մայիսի 15-ին հրովարտակ հրատարակեց, կոչելով բոլորին խաչակրաց արշաւանքի և համոզելով քրիստոնեայ զօրավարներին ընդհանուր թշնամու դէմ միանալու: Շատ հաւանական է, այդ միտքը ծագել է այնպէս, ինչպէս ասում է Պլատինը իւր Vitae Pontificum-ի մէջ. «պոչաւոր և հրաբորբոք գիտաւորը երևում էր մի քանի օր շարունակ. բայց որովհետեւ մատեմատիկոսները յայտարարեցին, որ դրան պիտի յաջորդեն սարսափելի ժանտախտ, սով և ուրիշ մեծ թշուառութիւններ, ուստի Կալիկսը, որպէսզի Աստուծոյ բարկութիւնը հեռացնէ, պատուիրեց մաղթանքներ կատարել, որպէսզի գալիք չարիքը, եթէ անգառնալի է, Աստուած տաճիկների գլխին թափէ: Որպէսզի մեղմացնէ Տիրոջը անընդհատ աղօթքներով, նա պատուիրեց նաև ամենայն կէս օրին դանգերը դարկել, որպէսզի հաւատացեալները իրենց աղօթքներով օգնէին զինւորներին, որոնք կռուում էին տաճիկների դէմ»: Բէլգրադը պաշարուեց 1456 թ. և ազատուեց անձնատուր լինելուց շնորհիւ ժամանակին օգնութեան հասած Յովհաննէս Կապիստրանի առաջնորդութեամբ:

քրիստոնեայ զօրքին և պապի պատուիրակ Կորվաեալի: Հինգ-
 Ժամուայ կռուից յետոյ նրանք տաճկական նաւատորմի շղթան
 կարելով ներս խոթեցին և ազատեցին այգալիսով Բէլգրադը,
 չնայած դրան Սերբիան կորաւ: Զօրքի մէջ սկսուեց սարսափելի
 համաճարակ, որից մեռաւ նաև Կապիտարանը: Չնայած այս
 բոլոր սարսափներին, արևմտեան պետութիւնները միանգամայն
 սառնասիրտ էին և միայն 1456-ին պապը վերջապէս նոցա
 օգնութեան հրաւիրեց Եթովպայի քրիստոնեայ թագաւորին, և
 Ասորիքի, Վրաստանի և Պարսկաստանի քրիստոնեաներին: Օմար
 -փաշան Յուլիս ամսին շարժուեց դէպի Ալպերը. ամենայն տեղ
 մեծ սով էր: Իրերի այոպիսի ծանր դրութեան և արամազրու-
 թեան մէջ Հալլէի գիտաւորի երեալը ժողովրդին սարսափի մէջ
 ձգեց: Մեծ սովութանը մեռաւ 1481 թ. սակայն մահմեդականնե-
 րը, չնայած մանր անյաջողութիւններին, շարունակեցին իրենց
 նուաճումները, որովհետև քրիստոնեաները շատ բաժան բա-
 ժան էին եղած, և չէին կարող միանալ ու շարժման առաջն
 առնել: Վերջի վերջոյ 1521 թ. Բէլգրադն էլ տաճիկների ձեռքն
 ընկաւ:

1531 թ. Ք. յ.: Գիտաւորի այս 1531 թ. երեալու ժամա-
 նակ տաճիկները դեռ ևս առաջ էին դնում բոլոր նոքա վերջա-
 պէս Վիէնայի մօտ պարտութիւն կրեցին: Գերմանիան բողոքական
 յեղափոխութեամբ Մարտին Լութերի ձեռքով բաժանուեց:
 1530 թ. տեղի ունեցաւ Աուգսբուրգի խոստովանութիւնը, իսկ
 յաջորդ տարին բողոքականները միմիանց հետ դաշն կապեցին
 «քրիստոնէական ճշմարտութեան, խաղաղութեան և իշխա-
 նութիւնների անօրինութեանց ճնշման համար»: Լութերի հա-
 յեացքը տաճիկների մօտին երևում է նորա պատասխանից, որ
 նոքա «տաան անգամ խելօք և բարեպաշտ են քան մեր կայսր-
 ները»: Նա իսկապէս ուղիղ կերպով մահմետականների յաջո-
 ղութիւնները վերադրում էր քրիստոնեայ կառավարիչների
 անջատման: Նա ասում էր. «Գերմանիայում տէր լինէր, մենք
 շատ հեշտութեամբ յետ կմդէինք տաճիկներին... Ինչպէս պապը
 կողոպտում էր մեզ իւր ինդուլգէնցիաներով տաճիկների դէմ
 մղուելիք կռուի անուամբ, այդպէս էլ տաճիկները մեր փոշե-
 րով կկլանեն մեզ... Թող օգնէ մեզ Քրիստոս և թող դատա-
 պարտէ նա մահուան պապին և տաճիկներին»:

Յվինգլին նմանապէս վախճանուեց 1531 թուին: Անգղիա-
 յում կրօնական երկպառակութիւն կար, և Հենրի VIII պա-
 հանջում էր իրեն Անգլիոյ հոգեւորականութեան եւ եկեղեցւոյ
 ծայրագոյն պէտ նանաչելու: Հնդկաստանի կառավարիչն էր Իւմէ-
 յեանը: Սկանդինաւիայում դաշիկարլիացոց վերջին ապստամ-

քութեան Գուռտավի դէմ ամենաթունդ ժամանակն էր: Յայանի աստղագէտ Կոպերնիկը դեռ ևս կենդանի էր, երբ գիտաւորը երևաց, հետեւապէս նա կարող էր տեսնել նորան: Նա մեռաւ 1543 թ.: Այս գիտաւորի առաջին երևալն էր, որ յետոյ Հալլէն քննութեան ենթարկեց:

1607 թ. Բ. յ.: Անգղիացւոց թագաւոր Զէմս I արդէն լիճում էր պարլամենտի հետ և յեղափոխութեան սերմեր ցանում. Հոլլանդիայի նաւատորմիղը ոչնչացրեց Իսպանացոց նաւատորմիկն և խաղաղութեան դաշն ձեռք բերեց: 1609 թ. Իսպանիան Հոլլանդիայի անկախութիւնը ճանաչեց: Նոր աշխարհում Զէմսոտուն քաղաքի շինմամբ Վիրգինիա նահանգի հիմքը դրուեց: Շեքսպիր և Գալիլէյ դեռ ևս կենդանի էին. Գալիլէյը վախճանուեց 1642 թ. Կեպլերը—1630 թ. Իսկ Բէկոնը—1626 թ.: Այս երկրորդ երևալն էր գիտաւորի, որը քննութեան ենթարկուեց Հալլէի կողմից:

1682 թ. Բ. յ.: Գիտաւորի այս երևալը նորանով է նշանաւոր, որ հէնց այս տարին Հալլէն գտաւ նրա երևալու պարբերականութիւնը: Ֆրանսիայի թագաւորն էր Լուդովիկոս XIV-ը: Ռուսաստանը կառավարում էին միսսին Յովհաննէսը և Պետրոս IV-ը: Տեղի է ունենում ստրեկեցներ (ռուսաց թագաւորների թիկնապահ զօրք) ապստամբութիւնը: Անգղիայում Մօնմաուտի ձեռքով արստամբութիւն առաջ եկաւ, բայց ճնշուեց: Իսահակ Նիւտոնը օգնեց Հալլէին գիտաւորի հետազօտութեան մէջ և ղախճանուեց 1727 թ.:

1759 թ. Բ. յ.: «Նշանաւոր յիսուն և ինն»: Անգղիական ազգային այս նշանաւոր գիտաւորը կրկին երևաց 1759 թ. որպէսզի ուրախանայ բրիտանական զէնքի համաշխարհային յաղթութեամբ: Այս տարուայ սկզբին ապագան Անգղիայի համար շատ մութն և երկիւղալի բնաւորութիւն էր կրում: Յայանի էր, որ Ֆրանսիացիք պատրաստուում են Անգղիա արշաւելու, այն ժամանակ, երբ վերջինս պատերազմ էր մղում Գերմանիայի, Սմերկիայի և Հնդկաստանի հետ ցամաքի և ծովի վերայ: Թշնամու նաւատորմիղը արդէն պատրաստ կանգնած էր Հալլրում, Բրեստում, Դիւնկերթէնում և Տուլօնում:

Առաջինը նշանակուած էր անգղիայի ափերի վերայ յարձակուելու, երկրորդը—Իրլանդիա դուրս գալու, երրորդը—Շօտլանդիա և չորրորդը իբրեւ պահեստի զօրք առաջին երեքին օգնութեան հասնելու համար: Բարեբախտաբար անգղիայի գործող ոյժերի գլուխ էին անցել այնպիսի տաղանդներ, ինչպէս Պիատ, Ժովապետներ՝ Բոսկովեն, Բոտնէյ, Խօկի, Խօլէ և զօրապետներ՝ Վօլֆ, Կլիվ և Կուդ: 1759 թուականը հաշուում է

«անդդիայի պատմութեան մէջ ամենափառաւորներէց մէկը, երբ ամեն առաւօտ քաղաքացիք միմիանց միայն հարցնում էին — էլի ի՞նչ նոր յաղթութիւն է տարած, — վախենալով, նրանց հաշիւը կորցնել»: Գորին նուաճուեց Յունուարին, Գլատալուսպա Յունիսին. Յունիսին Բողնէյ ռմբակոծում էր Հալլը. Օգոստոսին յաղթութիւն տարան Մինդենի մօտ. Լագոսում և Կվեքեկում — Սեպտեմբերին և Կվիքերոնեան ծոցի մօտ Նոյեմբերին: Լագոսում, Պորտուգալիայի հարաւային ափերի մօտ, անդդիացւոց նաւատորմիդը, ծովապետ Բոսկովենի առաջնորդութեամբ, գլխովին ջարդեցին Ֆրանսիացոց նաւատորմիին և ծովապետ Խոկի Կվիքերոնեան ծոցում երկար տարիներ շարունակ Ֆրանսիացւոց կարողութեանը վերջ դրեց և դրանով ցրեց անդդիացոց բոլոր երկիւղը Ֆրանսիական արշաւանքների առաջ:

Գեներալ Կլիվ համարեա բոլորովին դուրս քշեց Ֆրանսիացիներին Հնդկաստանից և հաստատեց այս երկրում Անդդիայի իշխանութիւնը: Երկու տարուց յետոյ Ֆրանսիական կառավարութեանը դրականապէս վերջ տրուեց:

Հիւսիսային ամերիկայում նմանապէս դիտաւորը գործերը որոշ դրութեան մէջ գտաւ, ինչպէս և Եւրոպայում, դոնեա Անդդիայի և Ֆրանսիայի նկատմամբ: Գեներալ Վօլֆը ձեռք ձգելով Կվեքեկը և Մոնրէալը, բրիտանական կայսրութեան հետ միացրեց, ամենաանդին դադուլթներէց մէկը: Եւրոպայում սարսափելի եօթնամեայ պատերազմն էր մղւում, որի ժամանակ պրուսացիք ընդդիմանում էին Աւստրիայի և Ֆրանսիայի զօրքին: Թագաժառանգ Ֆերդինանդը, որ հրամանատար էր անդդիացոց, հաննովերցոց և հեսսենցոց միացեալ զօրքին, Մինդենի մօտ ջարդեց Ֆրանսիացիներին (այս ճակատամարտի համար ասում են, որ յաղթութիւնը սխալմամբ էր տարած): Այդպիսով 1759 թ. ամբողջովին կորստաբեր էր Ֆրանսիայի համար: Պորտուգալիայում թագաւորում էր Կարլոս III, և եզուիտները դուրս վռնդուեցան այնտեղից: Որպէսզի վերջացնենք անդդիացոց յաղթութեանց երկար շարքը, յիշատակենք, որ Կուբան խլուեց Իսպանացւոց ձեռքից: Այս թուականին դիտաւորը մօտեցաւ երկրին շատ մօտ տարածութեան վերայ: Երկրի ազդեցութիւնը դիտաւորի վերայ միանգամայն նկատելի էր և արտայայտուեց նորա վերադարձման 14 օր ուշանալովը: Միւսոյն ժամանակ այս առաջին նախագուշակած երեւոյթն էր դիտաւորի:

1835 թ. Գ. յ: Հալլէի դիտաւորն երկրորդ և վերջին նախագուշակած երեւոյթն էր, որ մարդիկ ղիտեցին երկրի վերայ: 1835 թ. Ֆերդինանդ I աւստրիական գահը բարձրացաւ: Տաճ-

Ֆրանստանու մ Սեդուէ կադէրի ապստամբութիւնը: Անգղիայում անցկացաւ քաղաքային ըեֆորմների օրէնքը: Սէր Բոքերտ Պիլ գարձաւ նախագահ: Մի տարի առաջ բրիտանական ամբողջ կայսրութեան մէջ ճորտութեանը վերջ արուեց: Յաջորդ 1836 թ. հարաւային Աւստրալիան առաջին անգամ ընտկեցնուում է գաղթականներով:

ԻՐ. ՏՕՅ ՎԵՐՆԵՐ:

Նկատողութիւն ուս թարգմանչի:

Ի լրումն Հալլէի գիտաւորի վերոյիշեալ տեղեկութեանց, մենք կարող ենք նկատել, որ նա արդէն մեծ հեռագիտակների մէջ երևում է և ընթանում է դէպի մեզ ահռելի արագութեամբ: Սակայն մենք չենք թուի համաշխարհային այն դէպքերը, որոնց պիտի տեսնէ գիտաւորը այս տարի երկրի վերայ, որովհետեւ այդ բոլոր դէպքերը միևնոյն է մենք ևս պիտի տեսնենք և մեր ուսերի վերայ պիտի կրենք: Յամենայն դէպս նախընթացից երևում, է որ գիտաւորը ամեն անգամ, երբ երևան է գալիս տեսնում է, որ մէկը կամ թագաւոր է կամ թագաւոր է նստում, որ այստեղ կամ այնտեղ մարդկային արիւն է թափւում, որ մէկը անպատճառ մի ուրիշի ճնշում է, բռնադատում է, խիստ նեղում է: Մարդիկ կարծես անբաւական են նրանով, որ իրենց թռուցիկ, ինչպէս ջրային մի բշտիկ, կեանքը երկրիս վերայ շատ երկար է, և ահա նրանք ամեն կերպ աշխատում են կարճել այն կամ սովով, կամ ժանտախտով կամ պատերազմներով ևն. ևն.:

Հալլէի գիտաւորը ժողովրդի դրութիւնը Ռուսաստանում այնքան էլ ծանր չի գտնիլ, իսկ արամադրութիւնը այնքան ճնշուած, որ մենք անհրաժեշտ ենք համարում մեր բոլոր կրթուած բաժանորդների, ընթերցողների և յատկապէս ժողովրդական ուսուցիչների հարկաւոր ուղադրութիւնը հրաւիրել դորա վերայ:

Պէտք է յիշել, որ առողջ, կայտառ և բանական ժողովուրդը, ամեն մի առանձին առողջ և կենսուրախ մարդունման տարբերում է արագ ըմբռնմամբ, մեծ քաջութեամբ, ոգևորութեամբ և միևնոյն ժամանակ անսահման մեծահագութեամբ, ներողամտութեամբ դէպի իրենց ամենառիւսերիմ թըշնամին: Եւ ընդհակառակը, երբ մասսան մարմնապէս և հոգեպէս ճնշուած է, նրա մէջ արագութեամբ զարգանում են

սնոտիապաշտութիւնը և նախապաշարումները, արագութեամբ կորչում է միացեալ գիտակցութեան ոյժը: Իւրաքանչիւր մարդ զգում է իւր միայնութիւնը, թուլութիւնը, անօգնականութիւնը, ուստի և այդպիսի արամադրութեան տակ, ամեն մի տարերահան, բազմութեամբ գրգռումները ընդունում են հիւանդոտ, համաճարակային բնաւորութիւն, անցնելով անմիտ սարսափի, որի ժամանակ մարդիկ կորցնում են սեւ սպիտակից, արդարը անարդարից ջոկելու ընդունակութիւնը: Բացի հրէական, հայկական և ուրիշ ազգերի, խօլերայի և ժանտախտի պօղրոմներն էլ շատ պարզ կերպով հաստատում են այդ մենք տեսնում ենք, թէ ինչպէս խուժանը միմեանց անծանօթ մարդկանց վայրենութիւնից կուրացած կողոպտում է և յաճախ սպանում այն մարդկանց—բժիշկների, ֆելդշերների և ուսուցիչների—որոնց մօտ դեռ ևս երեկ հանգիստ կերպով բոլոր այդ ողորմելիները օգնութիւն և խորհուրդ էին փնտրում:

Ժողովուրդների և հասարակութեան ներկայ ժամանակիս անբնական ճնշումած արամադրութեան տակ չալլէի գիտաւորը կարող է դարդեցնել հին նախապաշարումները, ծնեցնել սնոտիապաշտական երկիւղ, առաջ բերել սարսափ և ընդհանրութեան կարող ստեղծագործող ոյժը ուղղել դէպի անդրադարձ կործանիչ գործը:

Ահա թէ ինչու հարկաւոր է առաջուց ժողովրդին հասկացնել, պատրաստել նրան ըմբռնելու և դիտելու այս հազուադիւտ և երկնային մեծ երևոյթը, որը մարդկանց վիճակի համար բնութեան միւս երևոյթներից ոչնչով չէ զանադանւում: Շատ կարելի է որ գիտաւորը պոչով կդիպչի երկրիս բայց պէտք է բացատրել մարդոց, որ մեր երկիրը առաջին անգամը չէ գտնւում գիտաւորի պոչի մէջ, և ոակայն, այդ ոչ ոք չէ նկատել, որովհետև գիտաւորի պոչը բազկացած է այնքան նօսր նիւթից, որ մեր մթնոլորդի օդը իսկապէս մի քանի հարիւր հազար անգամ աւելի թանձր է նորա պոչից: Յամենայն դէպս, կտրուկ և համերաշխ իւրացմամբ և ժողովրդի մէջ ուղիղ, բնութեան երևոյթների նկատմամբ գիտական հայեացքների տարածմամբ, պիտի ժողովրդին ներշնչել հաւատ նորա ապահովութեան, որպէսզի նա չվախենայ երկնային երկիւղանշաններից, քանի որ երկրիս վերայ էլ նորանցից աւելի քան պէտք է, շատ կան:

բարգմ. Արսակ վարդապետ